Կ-411[2]-05.12.2019-ՏՏԳԲ-011/0

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին 2011 թվականի նոյեմբերի 28-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 28.2-րդ, 43-րդ, 44-րդ կետերի, 15-րդ հոդվածի 2-րդ մասի 21-րդ կետի, 17-րդ հոդվածի 2-րդ մասի, 40-րդ հոդվածի 2-րդ մասի, 46-րդ հոդվածի 2-րդ մասի 6.2-րդ կետի, 48.1-ին հոդվածի 1-3-րդ մասերի, 51-րդ հոդվածի 4-րդ եւ 6-րդ մասերի, **54-րդ հոդվածի 4-րդ մասի 12-րդ կետում,** 59-րդ հոդվածի 3-րդ մասի 19-րդ եւ 20-րդ կետերի, 60.3-րդ հոդվածի 3-րդ եւ 5-րդ մասերի, 60.4-րդ հոդվածի 6-րդ եւ 7-րդ մասերի, 60.5-րդ հոդվածի 1-3-րդ, 5-րդ, 8-րդ, 9-րդ մասերի, 60.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 2-4-րդ մասերի, 60.9-րդ հոդվածի վերնագրի եւ 1-ին մասի, 60.10-րդ հոդվածի 1-ին մասի, 69-րդ հոդվածի 6-րդ մասի եւ 80-րդ հոդվածի 10-րդ մասի «շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի» բառերը փոխարինել «շրջակա միջավայրի ոլորտի» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի, 17-րդ հոդվածի վերնագրի «շրջակա միջավայրի պահպանության բնագավառում» բառերը փոխարինել «շրջակա միջավայրի ոլորտում» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի «բնապահպանական օրենսդրությամբ» բառերը փոխարինել «շրջակա միջավայրի օրենսդրությամբ» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 60.6-րդ հոդվածի 7-րդ մասի «բնապահպանության» բառը փոխարինել «շրջակա միջավայրի» բառերով:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: